# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

## ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

# Ո Ր Ո Շ Ու Մ

<< 24 >> սեպտեմբերի 2021թ. N ՄՈ/402-2021

ք. Արմավիր

**<<ԱՊԱԳԱՅԻ ՀՈՎՍԵՓ ԿԻՐԱԿՈՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տարածքային կառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, 13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2021 թվականի սեպտեմբերի 22-ի N ՄՈ/398-2021 և 2021 թվականի սեպտեմբերի 22-ի N ՄՈ/544-2021 որոշումները, <<Ապագայի Հովսեփ Կիրակոսյանի անվան միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպությունում փաստաթղթերի հանձնման–ընդունման աշխատանքները կազմակերպելու նպատակով.

**որոշում եմ՝**

1. Ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնաժողովին (Ն. Սարգսյան)՝ հանձնաժողովի աշխատանքներին մասնակից դարձնել <<Ապագայի Հովսեփ Կիրակոսյանի անվան միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության հաշվապահ Անուշ Բայանին (համաձայնությամբ):
3. Հանձնաժողովին (Ն. Սարգսյան)՝ սույն որոշմամբ նախատեսված աշխատանքներն իրականացնել հինգ աշխատանքային օրվա ընթացքում և արդյունքների մասին զեկուցել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին:
4. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի քարտուղարության վարչատնտեսական բաժնին (պետ Ա. Համբարձումյան)՝ աշխատանքներն իրականացնելու համար ապահովել հերթապահ մեքենայի տրամադրումը:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

***ՄԱՐԶՊԵՏ՝*** ***Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ***

Недействительная подпись

X

VERIFIED OCSP 24.09.2021 15:57:31 GMT+4

Подписано: MATEVOSYAN HAMBARDZUM 2809920230

Հավելված

Հայաստանի Հանրապետության Արմավիրի

մարզպետի 2021 թվականի սեպտեմբերի 24-ի

N ՄՊ/402-2021 որոշման

# ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄ

**Հանձնաժողովի նախագահ՝**

Ն. Սարգսյան - Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի պետ

**Անդամներ՝**

Ջ. Եղոյան - Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի ավագ մասնագետ

Ա. Խլղաթյան - Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի ավագ մասնագետ

**Հանձնող՝**

Մխիթար Մխիթարյան - <<Ապագայի Հովսեփ Կիրակոսյանի անվան միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության նախկին տնօրեն

**Ընդունող՝**

Իսկուհի Հակոբյան - <<Ապագայի Հովսեփ Կիրակոսյանի անվան միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնակատար

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ա.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Недействительная подпись

VERIFIED OCSP 24.09.2021 15:51:55 GMT+4

Подписано: HOVHANNISYAN ARAM 3812640023